

Արտատպված է՝ Ի. Ա. Բունին, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող»  
հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ:

## ՎՐԵԺ

Կաննի պանսիոն-հյուրանոցում, ուր ես գնացի օգոստոսի վերջերին, նպատակ ունենալով լողանալ ծովում և բնությունն նկարել, այդ տարօրինակ կինը առավոտները սուրճ էր խմում և ճաշում էր առանձին փոքրիկ սեղանին՝ մշտապես խիստ կենտրոնացած, մռայլ տեսքով, ասես ոչ մեկին և ոչինչ չէր տեսնում, իսկ սուրճից հետո գնում էր չգիտես ուր գրեթե մինչև երեկո: Մի շաբաթի չափ արդեն ապրում էի պանսիոնում և դեռևս հետաքրքրությամբ նայում էի նրան. սև խիտ մազեր, սև մեծ հյուսք գլխի շուրջը բոլորած, ուժեղ մարմին կարմիր ու սև ծաղկավոր կրետոնե զգեստի մեջ, գեղեցիկ, կոպտավուն դեմք, և այդ մռայլ հայացքը. . . Մատուցում էր մեզ մի էլզասուհի, մոտ տասնհինգ տարեկան մի աղջիկ, մեծ կրծքով և լայն հետույքով, շատ գիրուկ, զարմանալի նուրբ և թալմ գիրությամբ, չափազանց հիմար ու հաճելի, ամեն խոսքից երեսին վախ էր գալիս ու ժպիտ. և ահա մի անգամ հանդիպելով նրան միջանցքում, հարցրի.

— Dites, Odette, qui est cette dame?

Նա պատրաստ՝ և վախի, և ժպիտի, ինձ հառեց յուզափայլ-երկնագույն աչքերը.

— Quelle dame, monsieur?

— Mais la dame brune, là-bas?

— Quelle table, monsieur?

— Numéro dix.

— C'est une russe, monsieur.

— Et puis?

— Je n'en\_sais\_rien, monsieur.

— Est-elle chez vous depuis longtemps?

— Depuis trois semaines, monsieur.

— Toujours seule?

— Non, monsieur. Il y avait un monsieur...

— Jeune, sportif?

— Non, monsieur... Très pensif, nerveux...

— Et il a disparu un jour?

— Mais oui, monsieur...<sup>1</sup>

«Այդպես, այդպես,— մտածեցի:

— Հիմա որոշ բան հասկացա: Բայց ո՞ր է չքվում սա առավոտները: Դեռ որոնո՞ւմ է»:

Հաջորդ օրը, սուրճից քիչ հետո, ինչպես միշտ, իմ սենյակի բաց պատուհանից լսեցի մանրաքարերի խշխշոց պանսիոնի այգուց, դուրս նայեցի. կինը, ինչպես միշտ, գլխաբաց, իր զգեստի գույնի բաց հովանոցը բռնած ինչ-որ տեղ էր գնում արագաքայլ: Վերցրի ձեռնափայտս և

<sup>1</sup> — Ասացեք, Օդետ, ո՞վ է այս տիկինը: — Ո՞ր տիկինը, պարոն: — Այն սևահեր տիկինը, այնտեղ: — Ո՞ր սեղանին, պարոն: — Համար տասը: — Նա ռուս է, պարոն. — Էհ, և... — Նրա մասին ոչինչ չգիտեմ. — Նա վաղո՞ւց է ձեզ մոտ: — Երեք շաբաթ, պարոն: — Միշտ մենա՞կ է: — Ոչ, պարոն: Մի պարոն կար. . . — Զահել, սպորտային տեսքի՞: — Ոչ, պարոն: Շատ մտազբաղ, ներվային: — Եվ մի օր նա չքվե՞ց: — Այո պարոն... (Ֆր.):

շտապեցի նրա ետևից: Նա մեր նրբանցքից շոջվեց Կարոն բուլվար, ես նույնպես, շոջվեցի այն հույսով, որ նա իր մշտական մտասնեռության պատճառով ետ չի նայի ու ինձ չի զգա: Եվ իսկապես, մինչև կայարան նա ոչ մի անգամ ետ չնայեց: Ետ չնայեց և կայարանում, մտնելով երրորդ կարգի վագոնի կուպեն: Չնայելով գնում էր Տուլոն, ես, համենայն դեպս, տոմս վերցրի մինչև Սեն-Ռաֆայել, բարձրացա հարևան կուպեն: Նա հավանաբար հեռու չէր գնում, բայց ո՞ր: Դուրս նայեցի պատուհանից Նապուլում, Տեոլում. . . Վերջապես գլուխս դուրս հանելով Տրեյասի մի րոպեանոց կանգառում, տեսա, որ նա արդեն քայլում է դեպի կայարանի ելքը: Դուրս թռա վագոնից ու նորից գնացի նրա ետևից, մնալով սակայն որոշ հեռավորության վրա: Այս անգամ ստիպված եղա երկար գնալ. և՛ ծովի վրա բարձրացող զառիթափների երկայնությամբ ձգվող խճուղու ոլորաններով, և՛ նոսր սոճու անտառի կածաններով, որով նա կարճացնում էր իր ճամփան դեպի ծովափ, դեպի ափը կտրատող փոքրիկ ծովածոցները այդ քարքարոտ, անտառածածկ և ամայի վայրում: Մոտենում էր կեսօրը, շոգ էր, օդն անշարժ և թանձր էր տաքացած փշատերևից, ոչ մի տեղ՝ ոչ մի շուկա, ոչ մի ձայն, միայն խզխզում ու ճռճում էին ցիկադները, դեպի հարավ բաց ծովը փայլում էր, ծփում խոշոր արծաթյա աստղերով. . .

Վերջապես նա կածանով ցած վազեց դեպի սանգվիսե ժայռերի մեջ ընկած կանաչ ծովածոցիկը, ավազին նետեց հովանոցը, արագ հանեց կոշիկները, որ հագել էր բոբիկ ոտքին,— և սկսեց հանվել: Ես պառկեցի քարքարոտ լանջին, որի տակ նա արձակում էր մռայլ ծաղկավոր զգեստը, նայում էի ու մտածում, որ հավանաբար նրա լողազգեստն էլ նույնպիսի չարագուշակ տեսք ունի: Բայց զգեստի տակ ոչ մի լողազգեստ չկար, միայն մի կարճ վարդագույն շապիկ էր: Շապիկն էլ հանելով, նա արևայրուկից ամբողջապես դարչնագույն, ուժեղ, ամրակազմ, գետաքարերի վրայով քայլեց դեպի բաց, վճիտ ջուրը, ոտքերի կոճիկները լարած, հետույքի պիրկ կիսագնդերը շարժելով, արևառած ագորները փայլեցնելով: Ջրի մոտ կանգ առավ, հավանաբար աչքերը կկոցելով կուրացուցիչ փայլից, հետո ոտքերը մեջը թփթփացրեց, պազեց, սուզվեց ջրի մեջ մինչև ուսերը և ապա շոջվելով պառկեց փորին, ոտքերը տարածելով ձգվեց դեպի ավազոտ ափամերձ շերտը, նրա վրա դնելով արմունկներն ու սև գլուխը: Հեռվում լայն ու ազատ ծփում էր ծովի կուրացուցիչ արծաթագույն հարթությունը, փակ ծովածոցը գնալով ավելի թեժ էր տաքանում արևից, և ժայռերի ու ցածրիկ հարավային անտառի այդ շոգ անապատում այնպիսի լռություն էր, որ լսվում էր ինչպես ժամանակ առ ժամանակ իմ տակ երեսնիվայր պառկած մարմնի վրա էր գալիս ու ետ գլորվում մանր ապակեփայլ ծփանքը: Ես պառկած, քարերի արանքից նայելով, ավելի ու ավելի էի հուզվում այդ սքանչելի մերկության տեսքից, ավելի ու ավելի մոռանում իմ արարքի անմտությունն ու հանդգնությունը, և տեղիցս բարձրացա, հուզմունքից ծխամորձս կպցնելով, ու հանկարծ նա էլ գլուխը բարձրացրեց, հարցական հայացքն ուղղեց ինձ վարից վեր, շարունակելով սակայն մնալ պառկած, ինչպես որ պառկած էր: Ես վեր կացա, չիմանալով ինչ անել, ինչ ասել: Նա առաջինը խոսեց.

— Ես ամբողջ ճանապարհին լսում էի, որ մեկը գալիս է ետևիցս: Դուք ինչո՞ւ իմ ետևից եկաք:

Վճռեցի պատասխանել ուղղակի:

— Ներեցեք, հետաքրքրասիրությունից:

Նա ինձ ընդհատեց,

— Այո, դուք, երևում է, հետաքրքրասեր եք: Օդետն ինձ ասաց, որ հարցուփորձ էիք անում իմ մասին, պատահմամբ լսեցի, որ դուք ռուս եք, ուստի չգարմացա. բոլոր ռուսներն էլ չափազանց հետաքրքրասեր են: Բայց, այնուամենայնիվ, ինչո՞ւ եկաք իմ ետևից:

— Դարձյալ նույն հետաքրքրասիրությունից դրդված, մասնավորապես՝ պրոֆեսիոնալ:

— Այո, գիտեմ, դուք գեղանկարիչ եք:

— Այո, իսկ դուք գեղեցիկ եք: Բացի այդ, դուք ամեն օր ինչ-որ տեղ էիք գնում առավոտները, և դա ինձ հետաքրքրեց՝ ո՞ր, ինչո՞ւ չէիք գալիս նախաճաշի, որ հատուկ չէ պանսիոնի կենսությունին, և ձեր տեսքն էլ միշտ մի քիչ տարբերվում էր: Ձեզ հեռու եք պահում, միայնակ, լուռ, ասես մի բան եք ձեր մեջ թաքցնում. . . Դեհ, իսկ ինչու ես չհեռացա, երբ սկսեցիք հանվել. . .

— Դա արդեն հասկանալի է,— ասաց կինը:

Եվ քիչ լռելով, ավելացրեց.

— Ես հիմա դուրս կգամ: Մի րոպե շրջվեք, իսկ հետո եկեք այստեղ: Դուք էլ ինձ հետաքրքրեցիք:

— Ոչ մի դեպքում չեմ շրջվի,— պատասխանեցի:— Ես նկարիչ եմ, և մենք երեխաներ չենք:

Կինը ուսերը թորթվեց.

— Լավ, ինձ համար միևնույն է...

Ու կանգնեց հասակով մեկ, ցույց տալով իրեն ամբողջապես առջևից, կանացի իր ողջ գորուքամբ, անշտապ քայլեց գետաքարերի վրայով, գլխին գցեց իր վարդագույն շապիկը, հետո ցած քաշեց մերկ մարմնին, բացելով իր լուրջ դեմքը:

— Ծխամորճից բացի, դուք գուցե ծխախոտ էլ ունեք,— հարցրեց:

— Ունեմ:

— Տվեք ինձ:

Տվեցի, լուցկին վառեցի:

— Շնորհակալ եմ:

Ու ծուխը ներս քաշելով, սկսեց նայել հեռուն, ոտների մատները շարժելով, առանց ինձ դառնալու. հեզանքով ասաց հանկարծ.

— Ուրեմն ես դեռ կարող եմ դուր գալ:

— Եվ ինչպե՞ս,— բացականչեցի:— Հիասալի մարմին, սքանչելի մազեր, աչքեր. . . Միայն թե դեմքի չափազանց ոչ բարի արտահայտություն:

— Դա նրանից է, որ իսկապես տարված եմ մի չար մտքով:

— Այդպես էլ կարծում էի: Դուք ինչ-որ մեկից բաժանվել եք վերջերս, մեկը ձեզնից հեռացել է. . .

— Ոչ թե հեռացել է, այլ լքել: Փախել է ինձնից: Գիտեի, որ նա անհուսալի մարդ է, բայց չգիտես ինչու մի քիչ սիրում էի նրան: Պարզվեց, որ սիրել եմ ուղղակի սրիկայի: Հանդիպեցինք մեկուկես ամիս առաջ, Մոնտե-Կառլոյում: Այդ երեկո ես խաղում էի կազինոյում: Նա կանգնած էր կողքիս, նույնպես խաղում էր, խելահեղ աչքերով շարունակ նայում էր զնդին ու շարունակ շահում էր, շահեց մեկ, երկու, երեք, չորս անգամ. . . Ես էլ էի շահում, նա այդ տեսնում էր, ու հանկարծ ասաց. «Շաբա՛շ: Assez!»,— ու դարձավ ինձ. «N'est-ce pas, madam»:²

Ես ծիծաղելով պատասխանեցի. «Այո, շաբա՛շ»,— «Ախ, դուք ռո՞ւս եք»,— «Ինչպես տեսնում եք»:— «Ուրեմն զնանք խմենք»: Նայեցի նրան. հալից ընկած, բայց արտաքուստ դեռ նրբակիրթ մարդ էր. . . Մնացածը դժվար չէ հասկանալ:

—

Այո, դժվար չէ: Ընթրիքի ընթացքում ձեզ մտերիմ զգացիք, խոսում էիք անդադար, զարմացաք, երբ բաժանվելու ժամը եկավ..

—

Միանգամայն ճիշտ է: Եվ չբաժանվեցինք ու սկսեցինք մսխել շահածը: Ապրում էինք Մոնտե-Կառլոյում, Թյուրբիում, Նիցցայում, Նախաճաշում և ճաշում էինք Կաննի և Նիցցայի ճամփին ընկած պանդոկներում,— դուք, հավանաբար, գիտեք, թե դա ինչ արժե,— մի շրջան ապրեցինք Նույնիսկ Cap d'Antibes հյուրանոցում, ձևացնելով մեզ հարուստ մարդիկ. . . Իսկ փողը գնալով պակասում էր, վերջին կոպեկներով Մոնտե-Կառլո գնալն ավարտվեց լիակատար սնանկացումով. . . Նա սկսեց ինչ-որ տեղեր կորչել ու վերադառնալ դարձյալ փողով, թեև չնչին գումարներ էր բերում՝ հարյուր, հիսուն ֆրանկ. . . Հետո չգիտես որտեղ վաճառեց իմ

---

² Բավական է... Այնպես չէ՞, տիկին (ֆր.):

ականջօղերը, ամուսնական մատանին,— մի ժամանակ ամուսնացած եմ եղել,— վզից կախելու ոսկե խաչը. . .

— Եվ հավատացնում էր, իհարկե, ահա ուր որ է կստանա իրենից վերցված մի մեծ պարտքը, որ նշանավոր և հարուստ բարեկամներ ու ծանոթներ ունի:

— Այո, ճիշտ այդպես: Ով է նա, հիմա էլ ճիշտ չգիտեմ, նա խուսափում էր մանրամասն ու պարզ խոսել իր անցյալ կյանքի մասին, ու ես մի տեսակ անուշադիր եղա դրան: Դեհ, շատ ու շատ տարագիրների սովորական անցյալ. Պետերբուրգ, ծառայությունն աչքի ընկնող գնդում, հետո պատերազմը, հեղափոխությունը, Կոստանդնուպոլիսը. . . Փարիզում նախկին կապերի շնորհիվ իբր տեղավորվել էր և միշտ կարող էր շատ լավ տեղավորվել, իսկ առայժմ՝ Մոնտե-Կառլո կամ էլ, ինչպես ասում էր, մշտական հնարավորություն Նիցցայի ինչ-որ տիտղոսավոր բարեկամներից որևէ բան ստանալու. . . Ես արդեն վիատվում էի, հուսահատվում, բայց նա միայն քմծիծաղում էր. «Հանգիստ եղիր, վստահիր ինձ, արդեն որոշ լուրջ դեմարշեր արել եմ Փարիզում, իսկ թե կոնկրետ ինչ, դա, ինչպես ասում են, կնոջ խելքի բան չէ...»:

— Այդպես, այդպես. . .

— Ի՞նչը այդպես. . .

Ու հանկարծ դարձավ ինձ, աչքերը փայլեցնելով, հեռու նետելով հանգած ծխախոտը:

— Այս ամենը ձեզ զվարճացնո՞ւմ է:

Բռնեցի ու սեղմեցի նրա ձեռքը.

— Ինչպես չեք ամաչում: Այ, ձեզ կնկարեմ Մեդուզայի կամ Նեմեզիդայի կերպարանքով:

— Դա վրիժառության աստվածուհի՞ն է:

— Այո, շատ չար:

Նա տխուր քմծիծաղեց.

— Նեմեզիդա: Ինչ Նեմեզիդա: Ոչ, դուք լավն եք. . . Մի ծխախոտ էլ տվեք: Սովորեցրեց ծխել. . . Ամեն ինչի սովորեցրեց:

Ու ծխելով, նորից սկսեց նայել հեռուն:

— Մոռացա ձեզ ասել նաև, թե ինչքան զարմացած էի, երբ տեսա որտեղ եք գալիս լողանալու. ամբողջ մի ճանապարհորդություն ամեն օր և ի՞նչ նպատակով: Հիմա հասկանում եմ, միայնություն եք փնտրում:

— Այո. . .

Արևի տապը գնալով ավելի էր սաստկանում, տաք, բուրավետ սոճիների վրա ճպուռներն ավելի համառորեն, կատաղի էին խզխզացնում ու ճռճում, զգում էի, թե ինչպես շիկացած պիտի լինեն նրա սև մազերը, բաց ուսերը, ոտքերը, և ասացի.

— Գնանք ստվերին նստենք, արդեն շատ է այրում ու կավարտեք ձեր տխուր պատմությունը:

Նա սթափվեց.

— Գնանք. . .

Անցանք ծովածոցիկի կիսաշրջանն ու նստեցինք կարմիր ժայռերի տակի լուսավոր և շոգ ստվերում: Նորից բռնեցի նրա ձեռքն ու պահեցի իմ ձեռքում: Նա այդ չնկատեց:

— Ի՞նչը ավարտեմ,— ասաց նա:— Արդեն կարծես ցանկությունս կորավ պատմելու այդ իսկապես շատ տխուր ու ամոթալի պատմությունը: Դուք երևի մտածում եք, որ ես տղամարդու հաշվին ապրելու սովոր սիրուհի եմ, մի խաբեբայից մյուսի ձեռքն անցնող: Ամենևին ոչ: Իմ անցյալն էլ շատ սովորական է: Ամուսինս կամավորական բանակում էր, սկզբում Դենիկինի մոտ, հետո՝ Վրանգելի,

իսկ երբ արդեն Փարիզ ընկանք, դարձավ վարորդ ու սկսեց խմել, խմել ու հասավ այն աստիճանի, որ կորցրեց նույնիսկ աշխատանքը: Շարունակել նրա հետ ապրել արդեն ոչ մի կերպ չէի կարող: Վերջին անգամ տեսել եմ նրան Մոնպառնասում, «Դոմինիկի» դռան մոտ, գիտե՞ք, անշուշտ, այդ ռուսական պանդոկը: Գիշեր էր, անձրև, իսկ նա քրքրված կոշիկներով դոփդոփում էր ջրափոսերի մեջ, կռացած մոտ վազում անցորդներին, ձեռքը մեկնում մուրալու, անշնորհք օգնում էր, ավելի ճիշտ՝ խանգարում եկողներին դուրս գալ տաքսիից. . . Կանգնեցի, նայեցի նրան, մոտեցա: Ճանաչեց,

վախեցավ, շփոթվեց,— չեք կարող պատկերացնել, թե ինչ հիանալի, նրբանկատ, բարի մարդ էր,— կանգնել էր շվարած, նայում էր ինձ. «Մաշա, դո՞ւ ես»: Փոքրացած, մաշված շորերով, չսափրված, ամբողջապես շեկ մազակալած, թաց, ցրտից դողալով. . . Տվեցի նրան ամբողջը, ինչ ունեի պայուսակիս մեջ, նա բռնեց ձեռքս թաց, սառը ձեռքով, սկսեց համբուրել ու ցնցվել լացից: Բայց ի՞նչ կարող էի անել: Միայն ամիսը երկու-երեք անգամ ուղարկել երկու հարյուրական ֆրանկ. ես Փարիզում գլխարկի արհեստանոց ունեմ և բավական լավ եմ վաստակում: Իսկ այստեղ եկա հանգստանալու, լողանալու, և՛ խնդրեմ. . . Մի քանի օրից կմեկնեմ Փարիզ: Հանդիպել նրան, մի ապտակ տալ՝ ուղղակի հիմարություն է, և գիտե՞ք երբ այդ հասկացա: Հիմա միայն, ձեր շնորհիվ: Սկսեցի պատմել և հասկացա. . .

— Բայց, համենայն դեպս, նա ինչպե՞ս փախավ:

— Ախ, բանն էլ հենց այն է, որ շատ ստոր կերպով: Տեղավորվեցինք հենց այս պանսիոնում, ուր հիմա մենք հարևաններ ենք,— ու դա Cap d'Antibes օթելից հետո,— ու մի երեկո, ընդամենը մի տասը օր առաջ, գնացինք թեյ խմելու կազինո: Դեհ, ինչպես կարգն է, երաժշտություն, մի քանի պարող զույգ,— ես արդեն առանց զգվանքի տեսնել չէի կարողանում, կուշտ էի այդ ամենից,— սակայն նստել եմ, թխվածք եմ ուտում, որ նա պատվիրում է ինձ համար և իր համար ու մի տեսակ տարօրինակ ծիծաղում. նայիր, նայիր, ասում էր երաժիշտների մասին, իսկական կապիկներ են, ինչպես են դոփդոփում ու ծմռվում: Հետո բացում է դատարկ ծխախոտատուփը, կանչում մատուցողին, հրամայում է բերել իր համար անգլիական ծխախոտ, սա բերում է, ցրված տեսքով ասում է՝ կվճարեմ թեյից հետո, նայում է իր եղունգներին և դառնում ինձ. «Այս ինչ վիճակում են ձեռներս, գնամ լվանամ. . . »: Ու գնում է. . .

— Ու այլևս չի վերադառնում:

— Այո: Իսկ ես նստել, սպասում եմ: Սպասեցի տասը րոպե, քսան րոպե, կես ժամ, մի ժամ. . . Կարո՞ղ եք դա պատկերացնել:

— Պատկերացնում եմ. . .

Շատ լավ պատկերացրի. նստել են թեյի սեղանի շուրջը,

նայում են, լսում, տարբեր կերպ մտածում ամեն մեկն իր գարշելի վիճակի մասին. . . Մեծ պատուհանների ետև իրիկնացող երկինք ու ծովի փայլը, կատարյալ անշարժությունը, ոտքերով դոփդոփում են հատակը, փչում իրենց գործիքները, արմավենիների կախ ընկած մթնող ճյուղերը, երաժիշտները զարկում մետաղյա ափսեները, տղամարդիկ դրանց ներդաշնակ քստքստացնելով ու ճոճվելով, սեղմում են իրենց տիկնանց, ասես քարշ տալով նրանց միանգամայն որոշակի նպատակով. . . Կանաչ համազգեստի նման մի հագուստով մատուցող տղան հարգալից, գլխարկը հանելով, նրան է մեկնում «High-Jife» տուփը. .

— Էհ, և ի՞նչ: Դուք նստել եք. . .

— Նստել եմ ու զգում եմ, որ կործանվում եմ: Երաժիշտները գնացին, սրահը դատարկվեց, վառվեց էլեկտրական լույսը. . .

— Պատուհանները կապտեցին. . .

— Այո, և ես ոչ մի կերպ չեմ կարողանում տեղիցս վեր կենալ, ի՞նչ անեմ, ինչպե՞ս փրկվեմ: Պայուսակիս մեջ ընդամենը վեց ֆրանկ ունեմ ու մեկ էլ մի քիչ մանր:

— Իսկ նա իսկապես գնացել էր զուգարան, այնտեղ իր գործն արել, հետո կոճկվել էր և ոտքերի ծայրերի վրա միջանցքներով վազ տվել դեպի մյուս ելքը, դուրս էր եկել փողոց. . . Աստծուց վախեցեք, մտածեք, թե ում եք սիրել դուք: Որոնք նրան և վրեժ լուծեք: Ինչի՞ համար: Դուք հո փոքր աղջիկ չեք, պետք է տեսնեիք, թե ով է նա և ինչ վիճակի մեջ եք դուք ընկել: Ինչո՞ւ էիք շարունակում այդ ամեն տեսակետից սարսափելի կյանքը:

Նա լռեց, ուսը թոթվեց.

— Ո՞ւմ էի սիրում, չգիտեմ: Դա, ինչպես ասում են, պահանջ էր սիրո, որ ես իսկականից երբեք չէի ունեցել. . . Որպես տղամարդ նա ինձ ոչինչ չէր տալիս և չէր կարող տալ, վաղուց կորցրել էր իր տղամարդկային կարողությունը. . . Պետք է տեսնեի, թե ո՞վ է նա և ինչ վիճակի մեջ եմ ընկե՞լ: Իհարկե, պետք է տեսնեի, բայց չէի ուզում տեսնել, մտածել, կյանքում առաջին անգամ ապրում էի այդ կյանքով, այդ արատավոր ուրախությամբ, դրա բոլոր հաճույքներով, ապրում էի ինչ-որ կախարդանքի մեջ: Ինչո՞ւ էի ուզում որևէ

տեղ հանդիպել նրան և ինչ-որ կերպ վրեժ լուծել, նորից գայթակղություն էր, սևեռուն գաղափար: Մի՞թե չգիտեի, որ գարշելի, խղճուկ սկանդալից բացի, ոչինչ չէի կարող անել: Բայց դուք ասում եք. ինչի՞ համար: Այ նրա համար, որ այդ մարդու պատճառով ես այդքան ցածրացա, ապրեցի այդ խաբեբայական կյանքով, իսկ ամենագլխավորը՝ այն սարսափի, խայտառակության համար, որ կրեցի այն երեկո կազինոյում, երբ նա փախավ զուգարանից: Երբ ես, գլուխս կորցրած, ինչ-որ բաներ էի ստում կազինոյի դրամարկղում, մի կերպ ուզում էի այդ վիճակից դուրս գալ, խնդրում էի մինչև հաջորդ օրը որպես գրավ վերցնել պայուսակս, և երբ չվերցրին ու արհամարհանքով ներեցին ինձ և թեյը, և թխվածքն ու անգլիական ծխախոտը: Հեռագրեցի Փարիզ, երկու օրից հազար ֆրանկ ստացա, գնացի կազինո, այնտեղ, առանց երեսիս նայելու, վերցրին փողը, նույնիսկ հաշիվ տվեցին. . . Ախ, սիրելիս, ես ոչ թե Մեդուզա եմ, այլ սովորական կին, այն էլ չափազանց զգայուն, միայնակ, դժբախտ, բայց հասկացեք ինձ, ախր նույնիսկ հավն էլ սիրտ ունի: Ես ուղղակի հիվանդ էի բոլոր այս օրերին, սկսած այն անիծյալ երեկոյից: Եվ ուղղակի ինքն աստված ձեզ ուղարկեց ինձ, ես հանկարծ կարծես սթափվեցի. . . Ձեռքս թողեք, պետք է հագնվեմ, շուտով գնացքը կգա Սեն-Ռաֆայելից. . .

— Գալիս է թող գա,— ասացի:— Ավելի լավ է նայեք ձեր շուրջը, այս կարմիր ժայռերին, կանաչ ծովածոցին, ծուռումուռ սոճիներին, ականջ դրեք այս դրախտային ճոճռոցին. . . Սրանից հետո այստեղ կգանք միասին: Այո՞:

— Այո:

— Միասին էլ Փարիզ կմեկնենք:

— Այո:

— Իսկ թե ինչ կլինի հետո, չարժե գուշակություններ անել:

— Այո, այո:

— Կարելի՞ է ձեր ձեռքը համբուրել:

— Կարելի է, կարելի է...